

Հասցե՝ ՀՀ, 2224, Կոտայքի մարզ, Համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ փողոց 38-րդ, շենք 1/2, բնակարան 1, Հեռ.՝ +374 95 67 86 28

Կայք՝ www.madria.am, Էլ.-փոստ՝ m.andreasyan@engineers.am, ՀվՀՀ 01303481,



«ՄԱԴՐԻԱ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ
Լիցենզիա թիվ ՔՊԼ-001744, 2-րդ դաս

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»





Մ.Անդրեասյան

« 23 » ապրիլ 2026թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 09-26

ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Հովտուն, Ողջի, Գառնառիձ, Բյուրակն, Գտաշեն, Ալվար բնակավայրերի փողոցների արտաքին արհեստական լուսավորության ցանցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի

Նախագծող՝ «ԳՐԱՆԴ ԻՆՍՓԵԶՇՆ» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ»

Հասցե՝ ՀՀ, 2224, Կոտայքի մարզ, Համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ փողոց 38-րդ, շենք 1/2, բնակարան 1, Հեռ.՝ +374 95 67 86 28

Կայք՝ www.madria.am, Էլ.-փոստ՝ m.andreasyan@engineers.am, ՀՎՀՀ 01303481,

Նախագծի հիմքը՝

Համատեղ կնքված N ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-04/2026 պայմանագիր

Էլեկտրատեխնիկական մաս

Փորձաքննության է ներկայացվում ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Հովտուն, Ողջի, Գառնառիձ, Բյուրակն, Գտաշեն, Ալվար բնակավայրերի փողոցների արտաքին արհեստական լուսավորության ցանցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի էլեկտրատեխնիկական և նախահաշվային մասը:

Սույն նախագծի շրջանակներում, ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Հովտուն, Ողջի, Գառնառիձ, Բյուրակն, Գտաշեն, Ալվար բնակավայրերում նախատեսվում է իրականացնել փողոցների արտաքին արհեստական լուսավորության ցանցի կառուցում:

Նախագծով նախատեսված է արտաքին լուսավորության իրականացման համար տեղադրել թվով 238 հատ մետաղական հենասյուն, որոնց վրա կամրացվեն լուսատուները:

Լուսավորության ցանցի լուսատեխնիկական հաշվարկները կատարվել են համաձայն ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» նորմերի և կանոնների, «Light-in-Night Road» ծրագրով, համաձայն նախագծում առկա աղյուսակ 16-ի:

Նոր տեղադրվող հենասյունը կազմված է հետևյալ հիմնական բաղադրիչներից՝

- կանգնակ՝ Ø108x4 մմ պողպատյա խողովակ, l=7.0 մ,
- լուսատուի բարձակ՝ Ø42x3.0մմ պողպատյա խողովակ, l=2.0 մ,

Կանգնակները տեղադրվում են բնահողի 1.10մ խորությամբ փոսորակի մեջ և ամրացվում են Բ12.5 մակնիշի բետոնով:

Հաշվարկի արդյունքում նախագծով ընտրվել են 60Վտ հզորությամբ արտաքին լուսավորության լուսադիոդային լուսատուներ, որոնք ունեն հետևյալ պարամետրերը՝

- $\cos\varphi > 0.9$ Հզորության Գործակից (PF)
- 4000±500Կ ջերմաստիճանին գույնին համապատասխան լույս,
- 8400Լմ լուսային հոսք,
- -25° -ից +40° C օդի ջերմաստիճանի միջակայքում աշխատելու հնարավորություն,
- 60/120° ցրման անկյուն,
- ≥30000 ժամ երաշխիքային աշխատունակություն
- Պաշտպանվածության Աստիճանը (IP)՝ 65
- Մուցման Լարումը (Վ)՝ AC 150-250
- Ցանցի Հաճախականություն (Հց)՝ 50-60Hz
- Լուսատուի պահանջվող հավաստագրեր-ENEC, TUV, EAC

Հասցե՝ ՀՀ, 2224, Կոտայքի մարզ, Համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ փողոց 38-րդ, շենք 1/2, բնակարան 1, Հեռ.՝ +374 95 67 86 28

Կայք՝ www.madria.am, Էլ.-փոստ՝ m.andreasyan@engineers.am, ՀՎՀՀ 01303481,

• Երաշխիք՝ ≥ 3 Տարի

Լուսատուների էլեկտրասնուցումը կիրականացվի նոր կառուցվող 0,22 կՎ լարման ցանցերի միջոցով: Կատարվել է մալուխի ընտրության հաշվարկ, պահպանվել է լարման շեղման 5%-ի և լարման անկման 7.5%-ի շեմը(տես գծագիր 042-2026-ԳՆ-14), որի արդյունքում ընտրվել են СИП4-2x25մմ² և СИП4-2x16մմ² կտրվածքներով այլումինե մեկուսացված հաղորդալարեր: Դեպի լուսատու, հենարանների վրայով սնուցումներն իրականացվում են ПБ 1.5մմ² մալուխով:

Light-in-Night Road ծրագրով իրականացված հաշվարկի արդյունքում, իրականացվել է հենամեջերի թռիչքների ընտրություն: Թռիչքների հեռավորությունները ընտրելիս հաշվի է առնվել նաև տվյալ տարածքի կլիմայական տվյալները՝ մերկասառույցի և քամու արագության նորմատիվային ցուցանիշները:

Տվյալ տարածքի կլիմայական գոտին համապատասխանում է ըստ մերկասառույցի II գոտի (15մմ), ըստ Քամու արագությունը III գոտի է (32մ/վ):

Գրունտի շինարարական խումբը V կարգի է:

Հողային աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել հատուկ մեխանիզմով, կիրառելով է Ø300մմ տրամագծով հորատիչ սարք՝ մետաղական հենարանների տեղադրման փոսորակների փորման համար: Նախատեսվում է, անվտանգության և շահագործման կանոնների պահպանման համար մետաղական հենարանները հողանցել:

Հողանցումն իրականացվում է 1.5մ երկարության հողանցման էլեկտրոդով/օգտագործվում է 50x50x5մմ չափերով անկյունակ :

Էլեկտրամոնտաժային աշխատանքներն անհրաժեշտ է կատարել ԷՏԿ-ի, ՇՆուԿ 3.05.06-85-ի և գործող այլ հրահանգների նորմերի պահանջներով:

Համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 592-Ն որոշման «Էլեկտրատեղակայանքների սարքվածքի կանոնների»/այսուհետ ԷՍԿ/ Մաս 2՝ Էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխմանը ներկայացվող պահանջներ, բաժին 5 գլուխ 32 կետ 324-ի ՕԳՄ հաղորդալարերից մինչև բնակեցված և չբնակեցված տեղանքի գետնի մակերևույթը և փողոցների երթևեկելի մասերը հեռավորությունն ուղղաձիգով պետք է լինի 5 մ-ից ոչ պակաս: Այն կարող է նվազեցվել մինչև 2,5 մ՝ դժվարամատչելի տեղանքում, և մինչև 1 մ՝ անմատչելի տեղանքում (սարալանջեր, ժայռեր, քարափներ): Փողոցի ոչ երթևեկելի մասի հետ ՕԳՄ-ից դեպի մուտքերը ճյուղավորումների փոխհատման դեպքում ԻՄՀ-ից մինչև հետիոտնային ճանապարհների մայրեր հեռավորությունը թույլատրվում է նվազեցնել մինչև 3,5 մ:

ԻՄՀ-ից և մեկուսացված հաղորդալարերից մինչև գետնի մակերևույթ հեռավորությունը՝ դեպի մուտքերը ճյուղավորումների վրա, պետք է լինի 2,5 մ-ից ոչ պակաս:

Դեպի մուտքերը ճյուղավորումների չմեկուսացված հաղորդալարերից մինչև գետնի մակերևույթ հեռավորությունը պետք է լինի 2,75 մ-ից ոչ պակաս:

Հասցե՝ ՀՀ, 2224, Կոտայքի մարզ, Համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ փողոց 38-րդ, շենք 1/2, բնակարան 1, Հեռ.՝ +374 95 67 86 28

Կայք՝ www.madria.am, Էլ.-փոստ՝ m.andreasyan@engineers.am, ՀՎՀՀ 01303481,

Ըստ գլուխ 32 կետ 334-ի, մինչև 1000 Վ լարման ՕԳ-ների (ՕԳՄ-ների) միմյանց հետ փոխհատումն առավելապես պետք է կատարվի փոխհատման հենարանների վրա: Թույլատրվում է նաև փոխհատումը հենամիջուկ: Փոխհատվող ՕԳ-ների (ՕԳՄ-ների) հաղորդալարերի միջև հեռավորությունը՝ ըստ ուղղաձիգի, պետք է լինի 0,1 մ՝ հենարանի վրա, 1 մ՝ հենամիջուկ:

Ըստ գլուխ 33 կետ 355-ի, ընդհանուր հենարանների վրա թույլատրվում է ՕԳՄ-ի ԻՄՀ-ի համատեղ կախում ԿԳ-ի և ՀՀԳ-ի չմեկուսացված և մեկուսացված հաղորդալարերի հետ: Ընդ որում, պետք է պահպանվեն հետևյալ պայմանները՝

1) ՕԳՄ-ի անվանական լարումը պետք է լինի 380 Վ-ից ոչ ավել:

2) ՀՀԳ-ի անվանական լարումը պետք է լինի 360 Վ-ից ոչ ավել:

3) մինչև 1000 Վ լարման ՕԳՄ-ի հաղորդալարերը պետք է տեղադրվեն ԿԳ-ի և ՀՀԳ-ի հաղորդալարերից վերև, ընդ որում, հեռավորությունը՝ ըստ ուղղաձիգի, ԻՄՀ-ից մինչև ԿԳ-ի և ՀՀԳ-ի վերին հաղորդալար՝ անկախ դրանց փոխադարձ դասավորությունից, պետք է լինի 0,5 մ-ից ոչ պակաս՝ հենարանի վրա և հենամիջուկ: ՕԳՄ-ի և ԿԳ-ի (ՀՀԳ-ի) հաղորդալարերը պետք է դասավորել հենարանի տարբեր կողմերում:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նախահաշվային փաստաթղթերը, «Գրանդ Ինսիտեքշն» ՍՊԸ-ն նշում է, որ այն կազմված է ՀՀ կառավարության առ 23.06.2011թ N879-ն որոշումով հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի» համաձայն:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշվի հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը՝ 2763.5 և մեքենաների շահագործման ինդեքսը՝ 3053.76:

Համաձայն վերը նշված դրույթի նախահաշվային արժեքները որոշելիս ընդհանուր գների հիման վրա հաշվի են առնված հետևյալ գործակիցները.

Շինարարական նյութերի արժեքին տրված է՝

- | | |
|--|---------|
| 1. Տրանսպորտային ծախսերը հաշվի առնող գործակից | - 1.088 |
| 2. Այլ նյութերի չափը հաշվի առնող գործակից | - 1.05 |
| 3. Պահեստային, փաթեթավորման ծախսերը հաշվի առնող գործակից | - 1.02 |

Դիտարկելով ներկայացված նյութերը «ԳԲՆԴ ԻՆՍՓԵԶՇՆ» ՍՊԸ-ն նշում է՝

Փորձաքննության ներկայացված նախագծանախահաշվային փաստաթղթերի նախահաշվային արժեքը կազմում է – 55480.830 հզ. դրամ:

Նախագծի էլեկտրատեխնիկական մասը և նախահաշվային փաստաթղթերը կատարվել են գործող շին.նորմերին և կանոններին համապատասխան:

Նախագծի էլեկտրատեխնիկական մասի և նախահաշվային փաստաթղթերի վերաբերյալ դիտողություններ չկան: Այն երաշխավորվում է համաձայնեցման:

Հասցե՝ ՀՀ, 2224, Կոտայքի մարզ, Համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ փողոց 38-րդ, շենք 1/2, բնակարան 1, Հեռ.՝ +374 95 67 86 28

Կայք՝ www.madria.am, Էլ.-փոստ՝ m.andreasyan@engineers.am, ՀՎՀՀ 01303481,

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՄԱԴՐԻԱ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ փորձաքննությունը երաշխավորում է ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Հովտուն, Ողջի, Գառնառիձ, Բյուրակն, Գտաշեն, Ալվար բնակավայրերի փողոցների արտաքին արհեստական լուսավորության ցանցի կառուցման՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի համապատասխանությունը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Նախագծանախահաշվային փաստաթղթերին տրվում է դրական եզրակացություն:

Փորձագետ



Մ. Անդրեասյան